ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Երանոս, 1-ին փ., 43, Հեռ. (0262) 6-00-73,
yeranos.gegharquniq@mta.gov.am

N 89
04 մարտ 2019թ.

ԱՆՆԱ ՀՈՒԽԻԿՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԵՐԱՆՈՍ,
Վարդաձորի խճ. , 22

Հարգելի տիկին Հոխիկյան

Ի պատասխան Երանոս համայնքի ղեկավարին հասցեագրված Ձեր՝ 27.02.2019 թվականի դիմումի՝ հայտնում ենք հետևյալը՝

Երանոսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի մարտի 1-ի նիստի N 1 որոշման համաձայն՝ հանձնաժողովի նախագահ Մ. Ղազարյանը, հանձնաժողովի անդամներ Ժ. Փինաչյանը և Մ. Քարամյանը 2019 թվականի մարտի 2-ին այցելել են Վերին Գետաշեն համայնք և Գևորգ Գևորգյանի բնակության վայրում տեսակցել Ձեր երեխային՝ երեխայի կեցության պայմանների ուսումնասիրության նպատակով: Ուսումնասիրությանը ներկա է եղել նաև Վերին Գետաշենի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ Մ. Մխիթարյանը: Վերջիններիս կողմից կատարվել է երեխայի բնակության վայրի, նրա ընդհանուր վիճակի, կենսապայմանների ուսումնասիրություն և կազմվել համապատասխան արձանագրություն:

Հանձնաժողովի կողմից կազմված եզրակացության հիման վրա՝ տեղեկացնում ենք հետևյալի մասին.

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ երեխան ընդհանուր առմամբ գտնվում է լավ վիճակում, հանձնաժողովի անդամների՝ Գ. Գևորգյանի բնակարանում գտնվելու շուրջ երեք ժամերի ընթացքում երեխան որևէ անհանգստության նշան չի ցուցաբերել, խաղացել է իր խաղալիքներով, շփվել է հոր, տատի, պապի հետ: Երեխան կապված է եղել վերջիններիս, հատկապես հոր հետ, նա գտնվել է կոկիկ, խնամված վիճակում, այդ ժամանակահատվածում ուտել չի ցանկացել: Ժամը 18⁰⁰-ի սահմաններում երեխան հանգիստ քնել է: Երեխան եղել է հոր, տատի և պապի հոգածության կենտրոնում: Այսինքն, սույնով արձանագրվել է, որ հայրական տանը գտնվելու ընթացքում երեխայի կյանքին և առողջությանը որևէ վտանգ չի սպառնում:

Ինչ վերաբերում է երեխայի՝ մայրական կաթով սնվելու Ձեր դիմումով նշված հարցին և ներկայացված համապատասխան բժշկական փաստաթղթին՝ որի հիման վրա Ձեր կողմից

ներկայացվել է երեխային Ձեզ վերադարձնելու պահանջ՝ նշենք, Երանոս համայնքի խնամակալության մարմինը և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը չեն վիճարկում նշված փաստաթղթի իսկությունը, սակայն խնամակալության և հոգաբարձության մարմնին կանոնադրությամբ վերապահված լիազորությունների համաձայն՝ դա կիրականացվի երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող անմիջական վտանգի բացահայտման և արձանագրման դեպքում, ինչը տվյալ դեպքի պարագայում բացակայում է: Երեխայի կեցության վայրը որոշելը օրենքով վերապահված է դատարանի իրավասությանը:

Ինչ վերաբերում է Ձեր առաջարկությանը՝ ուսումնասիրությանը ներգրավել համապատասխան որակավորում ունեցող մասնագետի՝ տեղեկացնում ենք, որ այս փուլում հանձնաժողովը անհրաժեշտ չի համարել մասնագետի ներգրավումը:

Կից ներկայացվում է արձանագրության լուսապատճենը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Կատ. ՝ Մ. Ղազարյան